ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ե՞րբ է հիմնադրվել համաեգիպտական XI հարստությունը.**

1) Ք.ա. 2400 թ.
2) Ք.ա. 1540 թ.
3) Ք.ա. 2040 թ.
4) Ք.ա. 1840 թ.

2 **Ե՞րբ է տեղի ունեցել Քերոնեայի ճակատամարտը մակեդոնական և հունական բանակների միջև.**

1) Ք.ա. 338 թ.
2) Ք.ա. 337 թ.
3) Ք.ա. 336 թ.
4) Ք.ա. 339 թ.

3 **Ե՞րբ է Կոստանդիանոս Մեծի կողմից Արևելք տեղափոխվել Հռոմեական կայսրության մայրաքաղաքը.**

1) 313 թ.
2) 395 թ.
3) 330 թ.
4) 325 թ.

4 **Ե՞րբ է ֆրանկների առաջնորդ Քլոդվիգն ընդունել քրիստոնեություն.**

1) 486 թ.
2) 500 թ.
3) 510 թ.
4) 496 թ.

5 **Ե՞րբ է տեղի ունեցել խաչակրաց երկրորդ արշավանքը.**

1) 1096-1099 թթ.
2) 1147-1149 թթ.
3) 1189-1192 թթ.
4) 1202-1204 թթ.

6 **Ե՞րբ է կազմավորվել Ավստրո-Հունգարիան.**

1) 1856 թ.
2) 1866 թ.
3) 1867 թ.
4) 1848 թ.

7 **Ե՞րբ է տեղի ունեցել Թեհրանի խորհրդաժողովը.**

1) 1945 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 2-ը
2) 1944 թ. հունիսի 6-ից հուլիսի 12-ը
3) 1943 թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը
4) 1945 թ. սեպտեմբերի 17-22-ը

8 **Շումերական ո՞ր քաղաքն է առաջինը գերիշխանություն ձեռք բերել Հարավային Միջագետքում.**

1) Քիշը
2) Ուրուկը
3) Լագաշը
4) Ուրը

9 **Ասորեստանյան ո՞ր արքան է Ք.ա. 729 թ. գրավել Բաբելոնը՝ հռչակվելով բաբելոնյան թագավոր.**

1) Սալմանասար III-ը
2) Սարգոն II-ը
3) Աշուրնաձիրպալ II-ը
4) Թիգլաթպալասար III-ը

10 **Ո՞րն էր Հին Աթենքի գերագույն օրենսդիր մարմինը.**

1) արեոպագոս
2) բուլե
3) էկլեսիա
4) ապելլա

11 **Ու՞մ շնորհվեց կայսերական տիտղոսը Վերդենի բաժանման դաշնագրով.**

1) Լոթարին
2) Լյուդովիկոս Գերմանացուն
3) Օտտոնին
4) Լյուդովիկոս Բարեպաշտին

12 **Ինչպե՞ս վերանվանվեց անգլիական թորի կուսակցությունը XIX դարի 50-70-ական թթ.**

1) շովինիստական
2) պահպանողական
3) ազատական
4) սոցիալիստական

13 **Որտե՞ղ է առաջին անգամ շրջանառության մեջ դրվել «ազգերի ինքնորոշման» գաղափարը.**

1) Բրեստ-Լիտովսկի պայմանագրում
2) Փարիզի խորհրդաժողովում
3) Սևրի պայմանագրում
4) Բեռլինի վեհաժողովում

14 **Ո՞վ էր գլխավորում «Ազատ Ֆրանսիա» հակաֆաշիստական շարժումը.**

1) Բլյումը
2) Դալադիեն
3) Պետենը
4) Շարլ դը Գոլը

15 **Ի՞նչ է «պրինցիպատը».**

1) Վաղ կայսրության ժամանակահատվածը Հռոմի պատմության մեջ
2) Հուլիոս Կեսարի անձնական կառավարման շրջանը
3) Ուշ կայսրության ժամանակահատվածը Հռոմի պատմության մեջ
4) Դիոկղետիանոսի կողմից հիմնված կառավարման նոր եղանակը

16 **Տալ «բյուրգեր» տերմինի բացատրությունը.**

1) «քահանա»
2) «մանր ավատատեր»
3) «իշխանազն»
4) «հարուստ քաղաքացի»

17 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. հոների պարտությունը Կատալաունյան դաշտի ճակատամարտում
բ. Կայսր Մարկոս Ավրելիոսի կառավարման ավարտը
գ. Վաղես կայսեր զոհվելը Ադրիանապոլսի ճակատամարտում
դ. Հռոմեական կայսրության բաժանումը կայսր Թեոդոսիոսի կողմից

1) դ, բ, գ, ա
2) բ, գ, դ, ա
3) բ, գ, ա, դ
4) գ, ա, բ, դ

18 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կարլոս Մեծի թագադրվելը կայսր
բ. Պուատիեի ճակատամարտը ֆրանկական և արաբական զորքերի միջև
գ. Քլոդվիգի կառավարման ավարտը
դ. Լյուդովիկոս Բարեպաշտի կողմից Ֆրանկական կայսրության բաժանումը

1) գ, բ, ա, դ
2) բ, ա, դ, գ
3) գ, ա, դ, բ
4) գ, դ, բ, ա

19 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Գերմանական կայսրության հռչակումը
բ. Ընտրական առաջին բարեփոխումներն Անգլիայում
գ. Երկրորդ հանրապետության հռչակումը Ֆրանսիայում
դ. Ավստրո-Հունգարիայի Սահմանադրության ընդունումը

1) բ, դ, գ, ա
2) բ, դ, ա, գ
3) բ, գ, դ, ա
4) ա, դ, գ, բ

20 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Խորհրդա-ֆիննական պատերազմը
բ. Յալթայի խորհրդաժողովը
գ. Պոտսդամի խորհրդաժողովը
դ. Նյուրնբերգի դատավարությունը
ե. Թեհրանի խորհրդաժողովը

1) ա, ե, բ, գ, դ
2) դ, ե, գ, բ, ա
3) բ, դ, ա, ե, գ
4) ա, բ, ե, դ, գ

21 **Ե՞րբ է Խեթական պետության գահն անցել Թուդխալիաս II-ին.**

1) Ք. ա.1468 թ.
2) Ք. ա. 1450 թ.
3) Ք. ա. 1531 թ.
4) Ք. ա. 1550 թ.

22 **Ե՞րբ են կատարվել Սոլոնի բարեփոխումները.**

1) Ք.ա. 528 թ.
2) Ք.ա. 564 թ.
3) Ք.ա. 594 թ.
4) Ք.ա. 508 թ.

23 **Ե՞րբ է համամոնղոլական համագումարը Թեմուչինին հռչակել ընդհանուր տիրակալ.**

1) 1206 թ.
2) 1215 թ.
3) 1222 թ.
4) 1201 թ.

24 **Ե՞րբ է Ռուսաստանում հաստատվել Ռոմանովների արքայատոհմը.**

1) 1609 թ.
2) 1602 թ.
3) 1613 թ.
4) 1612 թ.

25 **Ե՞րբ են հրապարակվել ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի «14 կետերը».**

1) 1920 թ.
2) 1921 թ.
3) 1922 թ.
4) 1918 թ.

26 **Ալեքսանդր Մակեդոնացու ո՞ր զորավարը ստանձնեց Եգիպտոսի կառավարումը.**

1) Պտղոմեոսը
2) Կրատերոսը
3) Սելևկոսը
4) Անտիպատրոսը

27 **Ո՞վ էր խաչակիրների կողմից ստեղծված Երուսաղեմի թագավորության առաջին թագավորը.**

1) Լյուդովիկոս Բարեպաշտը
2) Ռիչարդ I Առյուծասիրտը
3) Գոտֆրիդ Բուլյոնցին
4) Ֆրիդրիխ I Շիկամորուսը

28 **Ո՞վ է Պետրոս Աբելյարը.**

1) միջնադարյան նշանավոր ճանապարհորդ
2) միջնադարյան նշանավոր գրող
3) միջնադարյան նշանավոր սքոլաստ
4) միջնադարյան նշանավոր նկարիչ

29 **Ո՞ր տերությունն օգնեց Հաբսբուրգներին ճնշելու հունգարական հեղափոխությունը.**

1) Իտալիան
2) Պրուսիան
3) Ֆրանսիան
4) Ռուսաստանը

30 **Ո՞վ էր ԱՄՆ-ի նախագահը «բարգավաճման ժամանակաշրջանում».**

1) Հ. Թրումանը
2) Ֆ. Ռուզվելտը
3) Ք. Քուլիջը
4) Ջ. Քենեդին

31 **Ո՞րն է Ամենհոտեպ IV փարավոնի կողմից ձեռնարկված բարեփոխումների գլխավոր հետևանքը.**

1) Վերսկսվեցին արտաքին նվաճումները, պետության սահմանները խիստ ընդարձակվեցին:
2) Խիստ կրճատվեցին հիքսոսների ազնվականության իրավունքները:
3) Սահմանափակվեցին Ամոնի տաճարի քրմության իշխանությունն ու ազդեցությունը:
4) Վերամիավորվեցին Վերին և Ներքին Եգիպտոսները:

32 **Ո՞րն է Սուասոնի 486 թ. ճակատամարտի գլխավոր հետևանքը.**

1) Կործանվեց Արևմտյան Հռոմեական կայսրությունը:
2) Ստեղծվեց Ֆրանկական կայսրությունը:
3) Հռոմեացիներին հաջողվեց Գալլիայից դուրս մղել բարբարոսներին:
4) Ֆրանկները գրավեցին Գալլիան, ուր ձևավորվեց նրանց պետությունը:

33 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Պերիկլեսի պաշտոնավարման սկիզբը
բ. Աթենական պետության ժողովրդավարացման սկիզբը
գ. Եգիպտոսի նվաճումն Ալեքսանդր Մակեդոնացու կողմից
դ. Աթենական նավատորմի արշավանքը Սիցիլիա

1) բ, ա, դ, գ
2) ա, բ, դ, գ
3) դ, գ, բ, ա
4) գ, ա, բ, դ

34 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ակրայի գրավումը մահմեդականների կողմից
բ. Երրորդ խաչակրաց արշավանքի ավարտը
գ. Խաչակիրների կողմից Երուսաղեմի գրավումը
դ. Եդեսիայի նվաճումը Մոսուլի կառավարիչ Զանգիի կողմից
ե. Զադար քաղաքի գրավումը խաչակրաց չորրորդ արշավանքի ընթացքում

1) գ, դ, ե, ա, բ
2) բ, գ, դ, ե, ա
3) ա, գ, ե, դ, բ
4) գ, դ, բ, ե, ա

35 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Բայց, այնուամենայնիվ, Երկիրը պտտվում է».**

1) Բրունոն
2) Բեկոնը
3) Գալիլեյը
4) Բրյոյգել Ավագը

36 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Մենք հետ ենք մնացել առաջատար երկրներից 50-100 տարով: Մենք պետք է այդ հեռավորությունը վազելով անցնենք տասը տարում»:**

1) Ի. Ստալինը
2) Ն. Խրուշչովը
3) Լ. Բրեժնևը
4) Վ. Լենինը

37 **Պատմական գործիչներին համապատասխանեցնել նրանց կառավարման տարեթվերի հետ.**

1. Համմուրապի	ա. Ք.ա. 1279-1213թթ.
2. Սալմանասար I	բ. Ք.ա. 1792-1750թթ.
3. Թուկուլթի-Նինուրտա I	գ. Ք.ա. 2330-2295թթ.
4. Ռամզես II	դ. Ք.ա. 1233-1197թթ.
5. Ամենհոտեպ IV(Էխնաթոն)	ե. Ք.ա. 1352-1336թթ.
	զ. Ք.ա. 1263-1234թթ.

1) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ե, 5-զ
2) 1-բ, 2-զ, 3-դ, 4-ա, 5-ե
3) 1-գ, 2- բ, 3-զ, 4-դ, 5-ա
4) 1-ե, 2-զ, 3-ա, 4-գ, 5-դ

38 **Պատմական գործչի անունը համապատասխանեցնել կառավարման տարեթվերի հետ.**

1) Ալեքսանդր I
2) Եկատերինա II
3) Պետրոս(Պյոտր) I
4) Նիկոլայ I

ա. 1762-1796թթ.
բ. 1855-1881թթ.
գ. 1801-1825թթ.
դ. 1682-1725թթ.
ե. 1825-1855թթ.

1) 1-ե, 2-բ, 3-գ, 4-դ
2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
3) 1-ա, 2-գ, 3-ե, 4-բ
4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-ե

39 **Ո՞վ էր Արևմտյան Հռոմեական կայսրության վերջին կայսրը.**

1) Դոմետիանոսը
2) Դիոկղետիանոսը
3) Հռոմուլոս Ավգուստուլոսը
4) Մարկոս Կրասոսը

40 **Ո՞վ է ռեֆորմիացիոն շարժման ղեկավարը Շվեյցարիայում.**

1) Ժան Կալվինը
2) Հենրիխ Բուրբոնը
3) Մարտին Լյութերը
4) Պիեռ Վալդոն

41 **Ո՞րն է ԱՄՆ-ում քաղաքացիական պատերազմի բռնկման գլխավոր պատճառը.**

1) Ժողովրդավարական և Հանրապետական կուսակցությունների միջև առկա լուրջ հակամարտությունը:
2) Իսպանախոս բնակչության ձգտումները վերամիավորվելու Մեքսիկային:
3) Ստրկության պահպանումը հարավային նահանգներում:
4) Անգլիական գերիշխանությունը վերականգնելու կողմնակիցների շարժումը:

42 **Ո՞րն է ԱՄՆ-ի Երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ մտնելու պատճառը.**

1) Գերմանական օդուժի կողմից դաշնակից Մեծ Բրիտանիայի պարբերական ռմբակոծումները:
2) Ճապոնիայի կողմից Ֆիլիպինների գրավումը:
3) Ստալինգրադի ճակատամարտում Խորհրդային բանակի հաղթանակը:
4) Հավայան կղզիներում տեղակայված Պիրլ Հարբոր ռազմակայանի վրա ճապոնական օդուժի հարձակումը:

43 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Պունիկյան պատերազմների սկիզբը
բ. Պլատեայի ճակատամարտը հույների և պարսիկների միջև
գ. Կորնթոսի համահունական վեհաժողովի հրավիրումը
դ. Մարաթոնի ճակատամարտը
ե. Պելոպոնեսյան պատերազմների ավարտը

1) գ, ա, դ, բ, ե
2) դ, բ, ե, գ, ա
3) բ, դ, գ, ա, ե
4) դ, ե, գ, ա, բ

44 **Պատմական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հենրիխ I
բ. Լոթար
գ. Ֆրիդրիխ I Շիկամորուս
դ. Բարսեղ(Վասիլ) II
ե. Յարոսլավ Իմաստուն

1) ե, բ, գ, դ, ա
2) բ, ա, դ, ե, գ
3) ա, գ, բ, ե, դ
4) գ, ա, բ, դ, ե

45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Անգլո-իրանական համաձայնագիրը
բ. ԽՍՀՄ-ի կազմավորումը
գ. Ճակատամարտը Սոմ գետի շրջանում
դ. Ձինված հեղաշրջումը Պետրոգրադում
ե. Առաջին հնգամյա պլանի սկիզբը

1) ե, ա, դ, գ, բ
2) գ, դ, բ, ա, ե
3) բ, դ, ե, ա, գ
4) գ, դ, ա, բ, ե

46 **Կատարել համապատասխանեցում.**

1. Մինա
2. Կամբիզ
3. Կուրիգալզու I
4. Լաբարնա I

ա. Ասորեստանի արքա
բ. Կուսսար քաղաքի տիրակալ
գ. Պարսից արքա
դ. Եգիպտոսի արքա
ե. Կուտիների արքա

1) 1-դ, 2-գ, 3-ե, 4-բ
2) 1-ա, 2- ե, 3- գ, 4-դ
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
4) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե

47 **Կատարել համապատասխանեցում.**

1. անգլիական խորհրդարանի հրավիրումը Սիմոն դը Մոնֆորի կողմից
2. Թավրիզի գրավումը շահ Իսմայիլի կողմից
3. Տրապիզոնի կայսրության նվաճումը թուրքերի կողմից
4. օսմանյան զորքերի ջախջախումը Լենկ Թեմուրի կողմից

ա. 1461 թ.
բ. 1265 թ.
գ. 1402 թ.
դ. 1502 թ.
ե. 1352 թ.

1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ե
2) 1-ե, 2-ա, 3-բ, 4-դ
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
4) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ե

48 **Պետական գործիչներին համապատասխանեցնել իրենց պաշտոնների հետ.**

1. Սայոնի
2. Օռլանդո
3. Վիլսոն
4. Կլեմանսո

ա. Իտալիայի վարչապետ
բ. ԱՄՆ-ի նախագահ
գ. Ճապոնիայի վարչապետ
դ. Ֆրանսիայի վարչապետ
ե. Մեծ Բրիտանիայի վարչապետ

1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
2) 1-ե, 2-ա, 3-բ, 4-գ
3) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա
4) 1-ա, 2-գ, 3-ե, 4-բ

49 **Կատարել համապատասխանեցում.**

1. Երկրորդ հանրապետությունը Ֆրանսիայում
2. Թանզիմաթի ժամանակաշրջանը Օսմանյան կայսրությունում
3. Դիրեկտորիայի կառավարման շրջանը Ֆրանսիայում
4. Առաջին կայսրությունը Ֆրանսիայում

ա. 1839-1876 թթ.
բ. 1848-1852 թթ.
գ. 1804-1814 թթ.
դ. 1795-1799 թթ.
ե. 1852-1870 թթ.

1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ
4) 1-բ, 2-ե, 3-դ, 4-գ

50 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1. Ճապոնիայի միանալը գերմանա-իտալական դաշինքին
2. Ադիս Աբեբայի գրավումը իտալական բանակի կողմից
3. Դանիայի և Նորվեգիայի գրավումը Գերմանիայի կողմից
4. Ճապոնիայի ագրեսիան Մոնղոլիայի դեմ
5. Գերմանիայի նախագահ Հինդենբուրգի մահը

ա. 1936թ.
բ. 1934 թ.
գ. 1935թ.
դ. 1939թ.
ե. 1944թ.
զ. 1940թ.

1) 1-գ, 2-ա, 3-զ, 4-դ, 5-բ
2) 1-զ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-ե
3) 1-ա, 2-գ, 3-զ, 4-դ, 5-բ
4) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ, 5-դ

Բ մակարդակ

51 **Նշված պնդումներից որ՞ն է ճիշտ.**

1) Աթենքի «Երկար պարիսպները»կառուցել է Թեմիստոկլեսը՝ պաշտպանելու համար քաղաքը պարսկական նավատորմի հարձակումներից:
2) Հունական գաղութացումը սկսվել է Ք. ա. IX դարում:
3) Սպարտայում իրական իշխանությունը գտնվում էր 30 հոգուց կազմված ավագների խորհրդի ձեռքում:
4) Ճակատամարտը Միկալե հրվանդանի մոտ տեղի է ունեցել 480 թվականին:

52 **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) Բյուզանդիայից խլված տարածքները մտան նորաստեղծ Լատինական կայսրության մեջ:
2) Խաչակրաց երրորդ արշավանքի ընթացքում Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ II Օգոստոսը խեղդվեց Կիլիկիայի գետերից մեկում:
3) Արևելքում ստեղծված երեք հոգևոր-ասպետական միաբանությունները ենթարկվում էին Երուսաղեմի թագավորին:
4) Երկրորդ խաչակրաց արշավանքը գլխավորում էին Անգլիայի թագավոր Ռիչարդ I Առյուծասիրտը և Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ I Շիկամորուսը:

53 **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Իրանում ծավալված սահմանադրական շարժման պարտության գլխավոր պատճառը 1911թ. Հյուսիսային Իրանի գրավումն էր ռուսական զորքերի կողմից:
2) Արևելյան հարցն Օսմանյան կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրման խնդիրն է, որը նոր ժամանակների միջազգային հարաբերություն-ների կարևորագույն հարցերից մեկն է:
3) 1853թ. ծագած Արևելյան(Ղրիմի) պատերազմում Օսմանյակ կայսրության հերթական պարտության հետևանքով Բուլղարիան վերականգնեց անկախությունը:
4) Նոր ժամանակների սկիզբն Իրանում համընկնում է Ղաջարների հարստության հաստատման հետ, որը շարունակվեց շուրջ 130 տարի:

54 **Ո՞վ էր մեծ մագիստրոսը.**

1) հոգևոր-ասպետական միաբանության ղեկավարը
2) կայսերական դեսպանը Հռոմի պապի պալատում
3) վանական միաբանության հոգևոր պետը միջնադարյան Եվրոպայում
4) Լատինական կայսրության տիրակալը

55 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. բենեֆիցիում
2. մայորդոմ
3. ինկվիզիցիա
4. խորհրդարան

ա. դասային ներկայացուցչական մարմին միջնադարյան Անգլիայում
բ. ծառայությունների դիմաց ցմահ տրվող կալվածք
գ. նախապես՝ թագավորական կալվածքների կառավարիչ Ֆրանկական պետությունում
դ. հերետիկոսական գաղափարների հավատաքննության դատարան
ե. դասային ներկայացուցչական մարմին միջնադարյան Ֆրանսիայում

1) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ
2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
3) 1-բ, 2-ե, 3-ա, 4-դ
4) 1-ե, 2-դ, 3-բ, 4-գ

56 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. գաղութ
2. դոմինիոն
3. մանդատ
4. դեկրետ

ա. Խորհրդային Ռուսաստանի օրենսդիր և գործադիր իշխանության բարձրագույն մարմինների ընդունած օրենքների անվանում:
բ. Պատմության նոր և նորագույն շրջանում որևէ օտար պետության գերիշխանության ներքո գտնվող երկիր կամ տարածք, որը զրկված է քաղաքական և տնտեսական ինքնուրույնությունից:
գ. Կառավարման ձև, գաղութային կախվածության տարատեսակ, որն առաջացել է Առաջին աշխարհամարտից հետո:
դ. Մինչև 1947թ. Ազգերի բրիտանական համագործակցության անդամ երկրների անվանումը:
ե. Քաղաքական կամ տնտեսական ղեկավար սկզբունք, հայեցակարգ:

1) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
2) 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ
3) 1-գ, 2-բ, 3-ա, 4-ե
4) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա

57 **Նշված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսանում են Պելոպոնեսյան պատերազմների հետևանք.**

ա. Ցրվեց Աթենական ծովային միությունը,որի նավատորմը հանձնվեց Սպարտային:
բ. Սպարտան և նրա պելոպոնեսյան դաշնակիցները պարտություն կրեցին, իսկ ողջ Հունաստանը միավորվեց Աթենքի շուրջ:
գ. Աթենքն ընդունեց Սպարտայի գերիշխանությունը:
դ. Աթենքն իր տիրապետությունը հաստատեց Մակեդոնիայի վրա:
ե. Օգտվելով հունական պոլիսների ծանր վիճակից, Աքեմենյան Պարսկաստանը վերականգնեց գերիշխանությունը Փոքր Ասիայում:

1) գ, դ, ե
2) բ, դ, ե
3) ա, գ, ե
4) ա, գ, դ

58 **Նշվածներից որո՞նք են աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքներ.**

ա. Հայտնագործվեցին մինչ այդ անհայտ մայրցամաքներ, զարգացավ գիտությունը:
բ. Վերացվեց Օսմանյան կայսրությունը՝ որպես խոչընդոտ Հնդկաստան տանող ճանապարհին:
գ. Եվրոպայի կապերն Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի հետ դարձան մշտական ու բազմաբնույթ:
դ. Առաջացան առաջին եվրոպական գաղութները:
ե. Եվրոպայից նոր հայտնագործված երկրներ արտահանվեցին հսկայական նյութական հարստություն և արժեքներ:
զ. Եվրոպացիները խթանեցին մի շարք հին քաղաքակրթությունների հետագա զարգացումն ու բարգավաճումը:

1) ա, գ, դ, զ
2) ա, գ, դ, ե
3) բ, գ, ե, զ
4) բ, գ, դ, ե

59 **Բերված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսանում են ֆաշիստական Գերմանիայի ծավալապաշտական քաղաքականության պատճառ.**

ա. Կախյալ տարածքների կառավարման նոր՝ մանդատային համակարգի անկատարությունը:
բ. Միջազգային հանրության կողմից վճռական գործողությունների դիմելուն պատրաստ չլինելը:
գ. Ֆաշիստական վարչակարգից բխող վտանգի թերագնահատումը:
դ. Գերմանիան շրջապատող մի շարք երկրներից բխող վտանգը:
ե. Միջազգային կազմակերպությունների լուծարումը Գերմանիայի հակառակորդ տերությունների կողմից:
զ. Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կողմից տարվող Գերմանիայի «խաղաղեցման» քաղաքականությունը:

1) ա, դ, ե
2) ա, զ, ե
3) բ, գ, դ
4) բ, գ, զ

60 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Թերմոպիլյան կիրճի ճակատամարտը
բ. Սպարտայի արքա Արքիդամոսի ներխուժումն Ատտիկա
գ. հույն-պարսկական պատերազմների ավարտը
դ. Նիկիասի հաշտությունը
ե. Կլիսթենեսի բարեփոխումները
զ. հունական նավատորմի հաղթանակը Միկալե հրվանդանի մոտ

1) բ, ա, ե, գ, զ, դ
2) զ, ե, ա, բ, գ, դ
3) ե, ա, զ, գ, բ, դ
4) գ, ա, զ, ե, դ, բ

61 **Աշխարհիկ և հոգևոր գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակաշրջանի.**

ա. Լևոն III
բ. Օտտոն I
գ. Լենկ Թեմուր
դ. Գրիգորիոս VII
ե. Վուլֆիլ
զ. Ալեքսիոս I
է. Ռիչարդ I Առյուծասիրտ
ը. Ֆիլիպ IV Գեղեցիկ
թ. Կարլոս Մարտել
ժ. Քլոդվիգ

1) թ, ա, բ, ե, դ, ժ, գ, զ, ը, է
2) բ, ա, ժ, ե, թ, դ, զ, է, գ, ը
3) ժ, դ, ե, զ, է, թ, ը, ա, գ, բ
4) ե, ժ, թ, ա, բ, դ, զ, է, ը, գ

62 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Իտալական թագավորության հռչակումը
բ. բաբիների շարժման ճնշումն Իրանում
գ. անգլո-իրանական հակամարտությունն ափղանական Հերաթ քաղաքի համար
դ. միապետության տապալումը Ֆրանսիայում
ե. դեկաբրիստների ապստամբությունը Ռուսաստանում
զ. Ջորջ Վաշինգտոնի առաջին առաջին անգամ ԱՄՆ-ի նախագահ ընտրվելը
է. հունգարական հեղափոխությունը
ը. ֆրանս-պրուսական պատերազմը
թ. «Փառահեղ հեղափոխությունը» Անգլիայում
ժ. հակաթուրքական ապստամբությունը Բուլղարիայում

1) գ, դ, ա, ժ, ը, զ, է, բ, ե, թ
2) ա, ժ, բ, ե, դ, զ, գ, թ, է, ը
3) թ, զ, դ, ե, գ, է, բ, ա, ը, ժ
4) թ, զ, դ, գ, ե, բ, է, ժ, ը, ա

63 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Իրավարար վճռի սահմանափակումը Հաշտության պայմանագրի 89-րդ հոդվածում նշված չորս նահանգներով կարծես պարտավորեցնում ու պարտադրում է…»:**

1) Հ. Թրումանը
2) Թ. Ռուզվելտը
3) Շ. Դը Գոլը
4) Վ. Վիլսոնը

64 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Կանգնեցնել Անգլիայի սողքը դեպի սոցիալիզմ»:**

1) Մ. Թեթչերը
2) Ու. Չերչիլը
3) Թ. Բլեյրը
4) Ջ. Մեյջորը

65 **Կատարել համապատասխանեցում.**

1. Աթենքի գրավումը Քսերքսեսի կողմից	ա. Ք. ա. 443 թ.
2. Մարաթոնի ճակատամարտը պարսկական և աթենական զորքերի միջև	բ. Ք. ա. 490 թ.
3. Մակեդոնիայի արքա Փիլիպոս II-ի գահակալման սկիզբը	գ. Ք. ա. 424 թ.
4. Պերիկլեսի առաջին ստրատեգոս ընտրվելը	դ. Ք. ա. 421 թ.
5. սպարտացիների արշավանքը Հյուսիսային Հունաստանի պոլիսների դեմ	ե. Ք. ա. 359 թ.
	զ. Ք. ա. 480 թ.

1) 1-դ, 2-գ, 3-ա, 4-զ, 5-բ
2) 1-զ, 2-բ, 3-ե, 4-ա, 5-գ
3) 1-ե, 2-բ, 3-զ, 4-դ, 5-ա
4) 1-ա, 2-ե, 3-գ, 4-բ, 5-զ

66 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Գործիչը
1.	Սրբազան հռոմեական (Գերմանական) կայսրության առաջացումը	1.	1206 թ.	1.	Ալեքսանդր Նևսկի
2.	Ալբիգոյան պատերազմների սկիզբը	2.	962 թ.	2.	Օտտոն I
3.	Առաջին համամոնղոլական ղուրուլթայը	3.	1240 թ.	3.	Չինգիզ խան
4.	Շվեդների պարտությունը Նևայի մոտ	4.	1209 թ.	4.	Ֆրիդրիխ I Շիկամորուս
		5.	1242 թ.	5.	Ինոկենտիոս III

1

1	3	2
2	1	4
3	4	5
4	2	3

2

1	3	4
2	1	5
3	2	2
4	4	1

3

1	2	3
2	5	4
3	1	2
4	3	5

4

1	2	2
2	4	5
3	1	3
4	3	1

67 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք վերաբերում են «Պերիկլեսյան ոսկեդարին».**

ա. Մտցվեց օստրակիզմի համակարգը, որով պետության համար վտանգավոր քաղաքացիները վտարվում էին Աթենքից 10 տարի ժամկետով:
բ. Պաշտոնյաներն աշխատավարձ էին ստանում, իսկ չունևոր աթենացիներին տոներին դրամ էին բաժանում՝ հաճախելու թատրոն:
գ. Ստեղծվեց 10 ստրատեգոսների խորհուրդ, որոնցից յուրաքանչյուրը հերթով ղեկավարում էր աթենական աշխարհազորը:
դ. Պաշտոնյաները հաճախ նշանակվում էին ոչ թե քվեարկությամբ, այլ վիճակահանությամբ:
ե. Հիմնվեց էֆորների հաստատությունը, որին տրված էին գերագույն վերահսկիչ գործառույթներ:
զ. Յուրաքանչյուր ազատ աթենացի իրավունք ուներ բողոքարկելու էկլեսիայի կողմից ընդունված նախկին օրենքը:
է. Ավարտվեց «Երկար պարիսպների» կառուցումը, որով Աթենքը թշնամու հարձակման ժամանակ հուսալիորեն կպաշտպանվեր:

1) ա, գ, ե, է
2) ա, գ, դ, զ
3) բ, դ, զ, է
4) բ, գ, զ, է

68 **Նշված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. 1911-1912թթ. պատերազմի արդյունքում Օսմանյան կայսրությունից զավթած հյուսիսաֆրիկյան տարածքներում Իտալիան ստեղծեց Լիբիա գաղութը:
բ. 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմի հետևանքով Ճապոնիային անցավ ողջ Սախալին կղզին:
գ. Բալկանյան թերակղզու և Լատինական Ամերիկայի պետությունները ձևավորվել են արդարացի պատերազմների արդյունքում:
դ. Մասնակցելով Առաջին աշխարհամարտին՝ Ֆրանսիան նպատակ էր հետապնդում զավթելու Շվեյցարիան և Բելգիան:
ե. Անգլիան Գերմանիային պատերազմ է հայտարարել 1914թ. օգոստոսի 1-ին:
զ. 1917թ. Անտանտի կողմից առաջին աշխարհամարտի մեջ մտան Լատինական Ամերիկայի 14 երկրներ:
է. 1917թ. բոլշևիկյան հեղաշրջման ընթացքում Ռուսաստանի 25 քաղաքներում իշխանությունը գրավվել է ուժի գործադրմամբ:
ը. Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանացիները քիմիական զենք գործադրեցին Իպր քաղաքի մոտ:

1) բ, դ, ե, է
2) ա, գ, զ, ը
3) գ, զ, է, ը
4) գ, դ, ե, զ

69 **Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա. 2007թ. ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին անգամ նախագահի պաշտոնը ստանձնեց աֆրոամերիկացի Բ. Օբաման:
բ. 1954թ. ԱՄՆ-ի նախագահ Դ. Էյզենհաուերը դադարեցրեց «վհուկների որսը»երկրում:
գ. 1991թ. Մ. Թեթչերին փոխարինեց չափավոր պահպանողական Ջ. Մեյջորը:
դ. 1966թ. Ֆրանսիան դուրս եկավ ՆԱՏՕ-ի ռազմական կառույցից:
ե. 2002թ. ֆրանսիական Սահմանադրությունում կատարված փոփոխության համաձայն՝ նախագահն ընտրվելու էր 5 տարի ժամկետով:
զ. ՄԱԿ-ի հիմնադիր կազմ մտան Հակահիտլերյան միության 51 անդամ երկրներ:
է. ՄԱԿ-ի Միջազգային դատարանն իր գործունեությունը սկսել է 1946թ.:

1) գ, դ, ե, զ
2) բ, գ, ե, է
3) ա, դ, գ, ե
4) բ, դ, զ, է

70 **Տալ նշված տերմինների բացատրությունը.**

1. արքոնտ
2. գերուսիա
3. պոպուլյարներ
4. լիթուրգիա
5. հելոտ
6. դոմինատ

ա. ժողովրդավարական ուժերի ներկայացուցիչների անվանումը Հին Հռոմում
բ. ստրկացված բնակչության ներկայացուցիչ Հին Սպարտայում
գ. կայսր Դիոկղետիանոսի կողմից հիմնված կառավարման ձև
դ. նախապես՝ ցմահ կառավարող գլխավոր գործադիր պաշտոնյա Հին Աթենքում
ե. անձնական միջոցներով հասարակական միջոցառումների ֆինանսավորումը հարուստ աթենացիների կողմից
զ. 30 հոգուց կազմված ավագների խորհուրդ Հին Սպարտայում
է. գերագույն մագիստրատի տեղակալ Հին Հռոմում

1) 1-է, 2-դ, 3-բ, 4-ե, 5-գ, 6-ա
2) 1-զ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-ա, 6-բ
3) 1-դ, 2-զ, 3-ա, 4-ե, 5-բ, 6-գ
4) 1-դ, 2-զ, 3-ե, 4-ա, 5-գ, 6-է

71 **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. «հավատո գործ»
2. Սալիական դատաստանագիրք
3. Կորտեսներ
4. Լատինական կայսրություն
5. «Ռուսկայա պրավդա»

ա. դասային միապետության ներկայացուցչական մարմին Իսպանիայում
բ. առաջին գրավոր օրենսգիրքը Կիևյան Ռուսիայում
գ. կաթոլիկ եկեղեցու դատավճռով հերետիկոսների ողջակիզում
դ. Բյուզանդիայից զավթված տարածքներում ստեղծված խաչակրաց պետություն
ե. Հռոմի պապի աշխարհիկ պետություն Միջին Իտալիայում
զ. սովորութային իրավանորմերի հիման վրա ստեղծված օրենսգիրք Ֆրանկական թագավորությունում

1) 1-ա, 2-բ, 3-ե, 4-դ, 5-գ
2) 1-գ, 2-զ, 3-բ, 4-դ, 5-ա
3) 1-գ, 2-զ, 3-ա, 4-դ, 5-բ
4) 1-բ, 2-գ, 3-զ, 4-ա, 5-ե

72 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. սուպրեմատիզմ
2. ֆուտուրիզմ
3. փոփ-արթ
4. հայտեք
5. ֆովիզմ

ա. 1970-80-ական թթ. առաջացած հետմոդեռնիստական հոսանք ճարտարապետության մեջ:
բ. Վերացական արվեստի հոսանքներից, որին բնորոշ է երկրաչափական վերացականությունը:
գ. Ֆրանսիական գեղանկարչության հոսանք, որն առաջացել է XXդ. սկզբին:
դ. Արվեստի ավանգարդիստական հոսանքներից, որը ձևավորվել է Իտալիայում:
ե. 1960-ական թթ. առաջացած ավանգարդիստական ուղղություն՝ որպես հակակշիռ ամերիկյան էքսպրեսիոնիզմի գաղափարներին:
զ. Փիլիսոփայության ուղղություն, որն առաջացել է Գերմանիայում:

1) 1-գ, 2-ե, 3-զ, 4-դ, 5-ա
2) 1-զ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա
3) 1-ա, 2-զ, 3-բ, 4-գ, 5-ե
4) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա, 5-գ

73 **Նշվածներից որո՞նք են հանդիսանում Սոլոնի բարեփոխումների հետևանքներ.**

ա. Վերացվեց պարտային ստրկությունը:
բ. Ստեղծվեց Աթենական ծովային միությունը:
գ. Մտցվեց օստրակիզմի համակարգը:
դ. Քաղաքացիություն ստացան Աթենքում մշտապես բնակվող օտար պոլիսների ներկայացուցիչները:
ե. Ատտիկայում մտցվեց գույքային ցենզ, ինչը լուրջ հարված հասցրեց տոհմատիրական կարգերին:
զ. Ստեղծվեց 10 ստրատեգոսների խորհուրդը:
է. Կատարվեց դատական բարեփոխում, որի արդյունքում ստեղծվեց ատենակալների դատարան:

1) ա, դ, զ, է
2) ա, դ, ե, է
3) ա, բ, գ, զ
4) բ, դ, ե, զ

74 **Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Վաշինգտոնյան խորհրդաժողովի հետևանքներ.**

ա. Հեռավոր Արևելքում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում հաստատվում էր կայունություն:
բ. Համաձայնեցվում էին հինգ առաջատար երկրների վերջրյա ծովային նավատորմների չափաբաժինները:
գ. Ի հաշիվ Գերմանիայի՝ տարածքային շոշափելի ձեռքբերումներ էր ունենում Լեհաստանը:
դ. Վերացվում էին առանձին երկրների ազդեցության գոտիները Չինաստանում:
ե. Չինաստանում հռչակվում էր մեծ տերությունների համար «բաց դռների» և «հավասար հնարավորությունների» սկզբունքը:
զ. Ճապոնիայի ռազմա-ծովային ուժերը կրկնապատկվում էին ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համեմատությամբ:
է. Չինաստանը կորցնում էր իր ինքնիշխանությունը, իսկ տարածքը մասնատվում էր:

1) ա, բ, դ, ե
2) բ, գ, զ, է
3) ա, դ, ե, զ
4) ա, բ, դ, զ

75 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սարգոն II-ի խոշոր արշավանքն Ուրարտուի դեմ
բ. Բաբելոնի գրավումը Մուրսիլիս I-ի կողմից
գ. Աշուրում Աքքադական հարստության հաստատվելը
դ. Խեթական տերության հզորության դարաշրջանը
ե. Ասորեստանի նոր վերելքը Աշուրնաձիրպալ II-ի օրոք
զ. Եգիպտոսի նվաճումը պարսիկների կողմից
է. համաեգիպտական XI հարստության հիմնադրումը Թեբեի փարավոնի կողմից
ը. Թիգլաթպալասար III-ի Բաբելոնի արքա հռչակվելը
թ. Թուդխալիաս II-ի գահակալության սկիզբը Խաթթիում
ժ. Թուկուլթի-Նինուրտա II-ի կողմից Բաբելոնի նվաճումը

1) թ, է, զ, գ, դ, բ, ը, ա, ժ, ե
2) է, գ, բ, թ, դ, ժ, ե, ը, ա, զ
3) գ, ա, է, թ, բ, ժ, դ, զ, ը, ե
4) բ, է, թ, գ, ժ, դ, զ, ը, ե, ա

76 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Դ. Էյզենհաուերի կողմից քաղաքական հալածանքների դադարեցումը ԱՄՆ-ում
բ. Շարլ դը Գոլի հեռանալը քաղաքական ասպարեզից
գ. Հարաբերությունների վերականգնումը ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի միջև
դ. Ալժիրում սպայության կողմից խռովության բարձրացումը
ե. 2-րդ անգամ վարչապետի պաշտոնի ստանձնումը Մ. Թեթչերի կողմից
զ. ԳԺՀ-ի և ԳԴՀ-ի միացումը
է. Կարիբյան ճգնաժամը
ը. Ֆոլկլենդյան պատերազմը
թ. Բեռլինի պատի կառուցումը
ժ. ՄԱԿ-ի Միջազգային դատարանի ստեղծումը

1) ը, ե, զ, բ, է, ժ, դ, ա, գ, թ
2) ե, զ, ժ, է, բ, ա, ը, դ, թ, գ
3) ժ, ա, գ, դ, թ, է, բ, ը, ե, զ
4) ա, ժ, թ, դ, ե, գ, բ, ը, զ, է

77 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Գործիչը
1.	Սամարիայի գրավումը	1.	Ք. ա. 449	1.	Թիգլաթպալասար III
2.	Բաբելոնի նվաճումն ասորեստանցիների կողմից	2.	Ք. ա. 587	2.	Կալիաս
3.	Հույն-պարսկական հաշտության պայմանագրի կնքումը	3.	Ք. ա. 720	3.	Նաբուգոդոնոսոր II
4.	Երուսաղեմի երկրորդ գրավումը բաբելոնյան զորքերի կողմից	4.	Ք. ա. 729	4.	Սարգոն II
		5.	Ք. ա. 626	5.	Նաբոպալասար

1

1	4	3
2	1	4
3	5	5
4	2	1

2

1	3	4
2	4	1
3	1	2
4	2	3

3

1	2	3
2	5	2
3	4	1
4	3	4

4

1	3	4
2	1	2
3	2	1
4	4	5

78 **Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակին.**

1. «Մարիա Մագդաղենացի»
2. «Ֆրանկների պատմությունը»
3. «Դեկամերոն»
4. «Վեներայի ծնունդը»
5. «Գոթերի պատմությունը»

ա. Ջովաննի Բոկաչչո
բ. Կասիոդոր
գ. Դոնաթելլո
դ. Գրիգորիոս Տուրացի
ե. Ս. Բոտիչելլի
զ. Ֆ. Բրունելեսկի

1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-բ
2) 1-դ, 2-բ, 3-ե, 4-ա, 5-զ
3) 1-ե, 2-զ, 3-բ, 4-գ, 5-դ
4) 1-զ, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ե

79 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Վայրը
1.	Գերմանական կայսրության հռչակումը	1.	1870թ.	1.	Շուշի
2.	Շահ Աղա Մոհամմադի սպանությունը	2.	1871թ.	2.	Թեհրան
3.	Ժողովրդական ապստամբությունը Երկրորդ կայսրության դեմ	3.	1905թ.	3.	Վերսալ
4.	Հահական իշխանությունների դեմ զանգվածային ընդվզումների սկիզբը	4.	1861թ.	4.	Փարիզ
		5.	1797թ.	5.	Հռոմ

1

1	2	3
2	5	5
3	4	4
4	3	2

2

1	1	4
2	4	1
3	5	3
4	2	2

3

1	5	4
2	1	2
3	3	5
4	2	1

4

1	2	3
2	5	1
3	1	4
4	3	2

80 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Գործիչը	#	Վայրը
1.	Կարիբյան ճգնաժամը	1.	1974 թ.	1.	Ու. Չերչիլ	1.	Ֆուլտոն
2.	Ուոթրգեյթյան գործը	2.	1982 թ.	2.	Մ. Թեթչեր	2.	Կուբա
3.	Սառը պատերազմի սկիզբը	3.	1962 թ.	3.	Ջ. Քենեդի	3.	Ատլանտյան օվկիանոս
4.	Ֆոլկլենդյան պատերազմը	4.	1946 թ.	4.	Ռ. Նիքսոն	4.	Վաշինգտոն

1

1	3	4	4
2	1	2	3
3	2	1	1
4	4	3	2

2

1	2	4	3
2	1	2	2
3	4	3	1
4	3	1	4

3

1	3	3	2
2	1	4	4
3	4	1	1
4	2	2	3

4

1	2	3	2
2	1	4	4
3	4	2	1
4	3	1	3